Հասցե՝ Արտաշիսյան 46/1, Երևան 0039
հեռ.՝ 010303010
mc@astvatsamayr.am

«ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ»
ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

"SOURB ASTVATSAMAYR" Medical Centre JSC

№ ԱԿ-569 09.10 2024թ.

ՈՐՈՇՈՒՄ N ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/29-4

«Սուրբ Աստվածամայր բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Հովհաննես Զոհրաբյանի

ՎԱՉԵ ՎՐԵԺԻ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Ա/Ձ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Սուրբ Աստվածամայր բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի /այսուհետ՝ պատվիրատու/ և Վաչե Վրեժի Նալբանդյան Ա/Ձ-ի /այսուհետ՝ մասնակից/ միջև 2024թ հունիսի 07-ին կնքվել է N ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/29-4 ծածկագրով բժշկական սարքավորումների մատակարարման պայմանագիր:

Պայմանագրի համաձայն պայմանագրով ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային ձևով պայմանագրի կատարման դեպքում՝ առաջին փուլի ժամկետը, սահմանվում է պայմանագիրը կնքելուց հետո 60 օրացուցային օր: Ընդ որում, սույն պարբերությամբ սահմանված ժամկետի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից՝ բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում:

26.07.2024թ-ի մասնակցի դիմումի համաձայն կնքվել է N1 համաձայնագիր, ըստ որի պայմանագրով սահմանված ապրանքի մատակարարման ժամկետը երկարացվել է 30

օրացուցային օրով, սակայն մասնակցի կողմից մինչ օրս ապրանքի մատակարարում տեղի չի ունեցել:

«Սուրբ Աստվածամայր բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն առաջարկել է միակողմանի լուծել վերոնշյալ պայմանագիրը՝ պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017թ մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. պարբերության "*Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝ ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը...*"

Հիմք ընդունելով վերոգրյալը և առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի հ.526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով 2024 թվականի սեպտեմբերի 30-ի ՍԱ-548 գրությամբ Վաչե Վրեժի Նալբանդյան Ա/Ձ-ն հայտով նշված nalbandyan-vache@rambler.ru էլեկտրոնային հասցեին ծանուցվել է N ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/29-4 ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծման մասին և վերջինիս մասին հայտարարությունը 2024 թվականի սեպտեմբերի 30-ին հրապարակվել է https://gnumner.minfin.am/ կայքում:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Հաշվի առնելով այն փաստը, որ Վաչե Վրեժի Նալբանդյան Ա/Ձ-ի կողմից գրությամբ սահմանված ժամկետում չի իրականացվել պայմանագրի կատարման և որակավորման ապահովումների վճարումը, Վաչե Վրեժի Նալբանդյան Ա/Ձ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. Վաչե Վրեժի Նալբանդյան Ա/Ձ-ի ներքոնշյալ տվյալները ուղարկել լիազորված մարմնին՝ ՀՀ Ֆինանսների նախարարությանը, Վաչե Վրեժի Նալբանդյան Ա/Ձ-ին՝ գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Մասնակցի						
անվանումը	ՀՎՀՀ/ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը			ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը
			խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը պայմանագիրը միակողմանի լուծելու եղանակով	խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը	որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	
Վաչե Վրեժի Նալբանդյան Ա/Ձ	20176793	ք. Երևան, Ազատության պող 24/12		Պայմանագրի 2.1.7 կետ		09.10.204թ. ՍԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/29-4

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվան հաջորդող օրը:

ՏՆՕՐԵՆ՝ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԶՈՀՐԱԲՅԱՆ

Կատարող՝ Ա. Խաչատրյան
Գնումների մասնագետ
Հեռ. /010/ 30 30 10 /4/